

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության. վարչական տույժ նշանակելու մասին 14.07.2021թ. թիվ 2113013391 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 03 >> 08 2021թ. 7-13- 11678

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Դավիթ Հոբոսյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Միշա Էլոյանի ՄԴ/58996-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Դավիթ Հոբոսյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Միշա Էլոյանը (ծանուցման հասցե՝ ք.Երևան, Գաջեգործների փողոց, 22 տուն) դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.07.2021թ. թիվ 2113013391 որոշումը՝ նշելով, որ տեսանյութում <<Հետադարձն արգելվում է>> ճանապարհային նշան առկա չէ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.07.2021թ. թիվ 2113013391 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում **իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն՝ 3.19 <<Հետադարձն արգելվում է>> ճանապարհային նշանը ցույց է տալիս այն վայրը, որտեղից հետադարձ կատարելն արգելվում է:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ

ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ճանապարհային ոստիկանության ճանապարհային երթևեկության կազմակերպման և հսկողության բաժնի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Ս.Պետրոսյան - Փիրումյաններ փողոցների խաչմերուկի հատվածում Ս.Պետրոսյան փողոցի վրա Սասնա Ծոեր փողոցի կողմից դեպի տվյալ խաչմերուկ երթևեկող տրանսպորտային միջոցների համար տեսանելի վայրում՝ տեղադրված է 3.19 <<Հետադարձն արգելվում է>> ճանապարհային նշանը: Վերը նշված ճանապարհային նշանը առկա է եղել նաև իրավախախտումն արձանագրման օրվա դրությամբ:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.07.2021թ. թիվ 2113013391 որոշման հիմքում դրված տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ <<OPEL>> մակնիշի 71PP117 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը Երևան քաղաքի Ս.Պետրոսյան - Փիրումյաններ փողոցների խաչմերուկի հատվածում 22.06.2021թ. ժամը՝ 18:24-ին կատարել է հետադարձ չպահպանելով <<կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշմամբ սահմանված՝ 3.19 <<Հետադարձն արգելվում է>> ճանապարհային նշանի պահանջը, ինչը չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Այսպիսով, վարորդի արարքում ակնհայտ է վարչական իրավախախտումների վերաբերյալ <<օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ <<օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.07.2021թ. թիվ 2113013391 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել <<վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Միշա Էլոյանին:

Կատարող Ա.Միրզոյան
Հեռ. 060838402



Ե.Կարապետյան